

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
36

Yerevan – 2023

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
36

Ереван – 2023

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

36

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական խորհուրդ՝ Գոհար Մուրադյան (գլխավոր խմբագիր), Վահան Տեր-
Ղևոնդյան, Կարեն Մաթևոսյան, Օլգա Վարդազարյան, Վահե Թորոսյան, Թեո վան
Լինտ, Արմեն Մովսեֆյան, Արտաշես Շահնազարյան, Գուրգեն Գասպարյան,
Արուսյակ Թամրազյան, Հայկ Համբարձումյան:*

*«Բանբեր Մատենադարանի» 36, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ին-տ. Երևան, 2023, 304 էջ:*

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
NATURAL SCIENCES
ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

ԿԱՐԻՆԵ ՄՈՍԻԿՅԱՆ*

DOI:10.57155/RLNZ1219

«ԽԱՈՆՎԱԾՔ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Խառնվածք, միջնադար, չորս տարրեր, հեղահյութեր, որակներ, Հիպոկրատես, Գալենոս, Ավիցենա, Ամիրոգովլաթ:

Ներկայումս խոսելով խառնվածքի մասին, սովորաբար նկատի են ունենում մարդկանց միջև բազմաթիվ հոգեբանական տարբերությունները՝ նրանց հոգեկան հատկությունների և հուզականության խորությունը, արտահայտվածությունը, գործողությունների ակտիվությունը, վարքի, շարժումների կայուն առանձնահատկությունները: Չնայած հետազոտողների բազմատեսակ մոտեցումներին, «խառնվածք» երևույթն այսօր էլ մնում է վիճահարույց և չլուծված խնդիր, ինչպես հոգեբանության, այդպես էլ ընդհանրապես մարդաբանության համար:

Անտիկ և միջնադարյան շրջանում խառնվածքի վերաբերյալ պատկերացումները և դրանց կիրառումը տեսական և գործնական գիտության մեջ արմատապես տարբերվում էին ժամանակակից մոտեցումներից: Միջնադարյան միտքը՝ մարդուն դիտարկելով իբրև փոքր աշխարհ, մի ամբողջական տեսություն էր ստեղծել այն մասին, որ նա կառուցված է տիեզերքի նման: Սա իր արտացոլումն էր գտել նաև չորս հեղահյութերի տեսության մեջ, ըստ որի՝ մարմնի արմատական որակները՝ ջերմություն, սառնություն, խոնավություն և չորություն, որ ձևավորվում են մարմնում գործառու չորս կենսական հեղահյութերով, փոխկապակցված են տիեզերական չորս տարրերի հետ: Այդ որակներից՝ բաշխման ռադիոնալ պահանջներին համապատասխան, առանց երկրորդային, կողմնակի հա-

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, փ.գ.թ., karinemosikyan@mail.ru, հոդվածը ներկայացնելու օրը՝ հունիսի 9, 2023, հոդվածը գրախոսելու օրը՝ դեկտեմբերի 9, 2023:

րաբերությունների, ձևավորվում են մարմինների խառնվածքները¹, նույնպես շարունակելով գտնվել տիեզերական տարրերի վերահսկողության ներքո և իրենց համադրությամբ որոշիչ դեր խաղալով մարդու մարմնակազմության, նրա հիվանդությունների, հոգեվիճակի և հոգեբանության ձևավորման մեջ²: «Առ ի լինել առողջութեան՝ պարտ է գոյ շափաւորութիւն խառնուածոցն, եւ զըստ բնութեանն շարադրութիւն մասնկանցն, իսկ առ ի լինել հիվանդութեան՝ բաւական է եւ մի խառնուած փոփոխեալ եւ մի մասնիկ ոչ գոյով ըստ բնութեանն», - գրում է Դավիթ Անհաղթը³:

Խառնվածքի⁴ մասին տեսության հիմնադիրը համարվում է Հիպոկրատեսը: Նա նկարագրել է խառնվածքի չորս տիպ՝ սանգվինիկ, քոլերիկ, ֆլեգմատիկ, մելանքոլիկ և դրանց հետ կապված՝ մարմնի հիմնական որակները՝ ջերմություն, սառնություն, խոնավություն և չորություն⁵: Նա մոդելավորել է նաև մարդու տարիքն ու տարվա եղանակները, մարմնի մասերն ու հեղահյութերը՝ տիեզերական տարրերի հետ զուգահեռող կառուցվածքներ: Այս հայեցակարգը հիմնված էր մարդու և բնության գլոբալ հարաբերությունների սկզբունքի վրա⁶:

Փալենոսը խառնվածքի տիպերը ներկայացնում էր մարդու բնախոսական, հոգեկան և բարոյական հատկանիշների շարքում: Նա խառնվածքը նկարագրում էր որպես մարմնի ներքին քիմիական համակարգերի անհատական հարաբերակցություն՝ «կենսական հյութերից» մեկի գերակշռությամբ: Իր բժշկական առաջարկություններում նա նույնպես հետևում էր զուգահեռության տեսական սկզբունքներին, ըստ որի, մեծ աշխարհի յուրաքանչյուր տարր նմանեցվում էր մարդու չորս օրգանական հեղահյութերից մեկին: Իսկ մոլորակները կառավարում են բնական գործընթացները՝ հիմնված մեծ ու փոքր աշխարհների փոխնմանության և փոխհարաբերության վրա⁷: Ըստ Փալենոսի, խառնվածքը նոր որակ է, որ գոյանում է հակառակ որակների փոխազդեցության արդյուն-

¹ Абу Али Ибн Сина, *Канон врачебной науки, избранные разделы*, Москва/Ташкент, 1994, ч. 1, с. 23.

² *Культура Древнего Рима*, в 2-х томах, т. 1, Москва, 1985, с. 269.

³ Դավիթ Անյաղթ, *Սահմանք իմաստասիրութեան*, ֆնական բնագիրը, ուսուերեն քարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1960, էջ 32:

⁴ «Խառնվածք» հունարեն κρῖσις բառից, որ նշանակում է «միաձուլում, խառնում»:

⁵ Гиппократ, *Избранные книги*, пер. с греческого В. Руднева, Москва, 1936, с. 169-155.

⁶ *Человек и история в средневековой философской мысли русского, украинского и белорусского народов. Сборник научных трудов*. Под ред. В. С. Горского, Киев, 1987, с. 82.

⁷ Клавдий Гален, *Сочинения*, том I, сост., вступ. ст. и коммент. Д. А. Балалыкина, пер. с древнегр. А. П. Щеглова, Москва, 2014, сс. 589-591: «Три комментария на книгу Гиппократа О природе человека».

քում: Տեսականորեն այն կարող է լինել լիովին հավասարակշռված, երբ հակառակ որակների մասերը նրա մեջ հավասար են և հակադրվում են իրար այնպես, որ խառնվածքն ի հայտ է գալիս դրանց մեջ իբրև իրապես միջնորդավորող կապ: Խառնվածքը կարող է նաև չլինել հակառակ որակների անմիջապես մեջտեղում, այլ հակված լինել դեպի այս կամ այն որակը:

Սակայն սրանցից ոչ մեկը բժշկագիտության մեջ ընդունված հավասարակշռությունը կամ դրա խախտումը չէր, որովհետև, ինչպես հայտնում է Ավիցենան, հավասարակշռվածը՝ բժշկական առումով, ձևավորվում է ոչ թե հավասարաչափ, այլ «արդարամաս» բաշխմամբ: Ըստ նրա, երբ հակառակ որակներն իրենց ուժերով փոխազդում են միմյանց վրա, նրանց միավորումից առաջանում է բնություն, որ նման է բոլոր որակներին⁸: Ավիցենան կարծում էր, թե այս դեպքում բժիշկը պարտավոր է ընդունել բնագետի խոսքն այն մասին, որ հավասարակշռված խառնվածքը ձևավորվում է ոչ թե հավասարաչափ բաշխմամբ, այլ «արդարաբաժին»: Նշանակում է՝ այդպիսի հավասարակշռության դեպքում խառնվածի բաղադրության մեջ՝ դա կլինի մարդու ողջ մարմինը, թե ինչ-որ օրգան, պետք եղած չափով առկա կլինեն կենսական հեղուկների այն համամասնությունները, որոնք քանակապես և որակապես հարկ է, որ լինեն տվյալ մարդու խառնվածքում: Երբ այդ հեղուկները նվազում են կամ ավելանում, կամ տեղաշարժվում են մարմնի՝ իրենց բնորոշ հատվածներից՝ թափանցելով անսովոր մասեր, կուտակվում են մի տեղ կամ ենթարկվում որակական փոփոխությունների, նրանք մարդու համար տարբեր հիվանդություններ և հուզական վիճակներ են ստեղծում:

Այսպիսի մոտեցումը արժեքավոր էր այն առումով, որ նյութական հիմնավորում էր առաջ քաշվում օրգանիզմում և՛ օրգանական, և՛ բնախոսական, և՛ հոգեբանական տարբեր փոփոխությունների առաջացման համար: Ըստ որում, օրգանական հեղահյութերի քանակական և որակական տեղաշարժերը՝ առաջ բերելով փոփոխություններ ամբողջ մարմնում, կարևորվում էին ինչպես նրանում առաջացող հիվանդությունների ախտորոշման, բուժման, ելքի կանխորոշման, այնպես էլ կանխարգելման առումով: Մարմինը դիտարկելով որպես մեկ միասնական, ամբողջական համակարգ, որ գործառում է հոգու հետ միասին, ձևակերպվում էին առողջության պահպանման և հիվանդությունների բուժման ընդհանուր մոտեցումներ՝ նկատի առնելով մարդու՝ իբրև փոքր աշխարհի և նրան շրջապատող մեծ աշխարհի նմանությունները, դրանց փոխհարաբերությունն ու փոխազդեցությունը: Ուստի հասկանալու համար անտիկ, միջնադար-

8 Ибн Сина, ч. 1, с. 23.

յան և նույնիսկ ավելի ուշ շրջանի բժիշկների գործունեության առանձնահատկությունները, անհրաժեշտ է հնարավորինս ամբողջական և համապարփակ պատկերացում ունենալ այն մասին, թե ինչպես էին նրանք ընկալում «խառնվածք» երևույթը, և ինչպես էին կիրառում այն իրենց տեսական և գործնական հետազոտությունների ժամանակ:

Այսպիսով, ըստ բնափիլիսոփայական ավանդույթների, խառնվածքի չորս տիպերի մասին ուսմունքը հիմնվում էր մեծ ու փոքր աշխարհների միասնականության մասին պատկերացումների վրա: Օդը, ջուրը, կրակը և հողը չէին ընկալվում լոկ իբրև տարրեր, որոնցից առաջացել էր Համայնը, այլ նաև հիմք՝ մարդու նյութական, բնախոսական և հոգեբանական կառույցի համար, որի մեջ դրանք դրսևորվում էին չորս կենսաբանական հեղահյուլթերի, համապատասխանաբար՝ արյան, լորձի, դեղին և սև մաղձի ձևով:

Անտիկ շրջանում մարդու և աշխարհի զուգահեռության մասին կարծիքը պաշտպանում էին Պյութագորասը, Դեմոկրիտոսը, Պլատոնը, Արիստոտելը, ստոյիկյանները, Պլոտինոսը և այլ ականավոր փիլիսոփաներ: Հետագայում այն թափանցում է նաև հունական հայրաբանություն և լատինական սքոլաստիկա, ապա ծաղկում է ապրում Վերածննդի շրջանի բնափիլիսոփայության և խորհրդապաշտության մեջ: Այս գաղափարը նաև հատուկ տեսական և գործնական նշանակություն է ձեռք բերում Պարացելսի օկուլտային բժշկության և ալքիմիայի համար: Սակայն նոր ժամանակների փիլիսոփայության մեջ այն այլևս տեղ չի գտնում աշխարհի գիտական պատկերում, թեպետ 20-րդ դարում դրա դրույթները լրացնում են թեոսոֆիստական և անթրոպասոֆիստական ուսմունքները:

Մեզ ևս այն հետաքրքիր է անտիկ և միջնադարյան բժշկագիտության տրամաբանությունը հասկանալու, գուցե նաև դրանում եղած օգտակարը կիրառելու համար:

Ըստ Հիպոկրատեսի, կենսական չորս հեղահյուլթերի բնական քանակը կախված է մարդու տարիքից և տարվա եղանակից: Դեռահասության շրջանում օրգանիզմում ավելանում է արյունը, որը ավելացման է հակված նաև գարնանը: Հետևաբար, մարդու այս տարիքը զուգորդվում է գարնան հետ, երբ բնությունը խոնավ է և տաք: Երիտասարդ տարիքում մարդու մարմնում գերակշռում է դեղին մաղձը, որի ակտիվացման եղանակն ամառն է: Այս ընթացքում մարդու բնությունը տաք է և չոր: Հասուն տարիքում ավելանում է սև մաղձը: Սրան համապատասխանող եղանակն աշունն է: Բնությունն այս շրջանում հակված է դեպի չոր և սառը որակներ, այդ պատճառով մարդն այս տարիքում ավելի խիստ և ուժեղ է: Ծերության շրջանում նկատելի է լորձի ավելցուկը, որը զուգորդվում

է ձմռան հետ, երբ մարդու բնությունը հակված է լինում դեպի խոնավ և սառը խառնվածք: Հետևաբար, երեխայի հիվանդությունների համար հիմնական պատասխանատուն համարվում էր արյունը, երիտասարդ տարիքի հիվանդությունները կապվում էին դեղին մաղձի հետ, ծերունական շրջանի հիվանդությունները՝ լորձի հետ: Նույն կերպ, ըստ տարվա եղանակի՝ աշնանն առաջացող հիվանդությունները հաճախ պայմանավորվում էին սև մաղձով, ձմռանը՝ լորձով և այլն⁹:

Ավիցեննան մարմնական այս կամ այն որակի և դրան համապատասխանող տարրի գերակշռությամբ էր բացատրում նաև մարմնում առաջացող կառուցվածքային փոփոխությունները: Այսպես, հողն ինքնին, բնույթով լինելով սառը և չոր, դրսևորվում է զգայելի սառնության ու չորության որակներով: Հողի առկայությունն առարկայի մեջ նպաստում է դրա միավորմանն ու ամրացմանը, ուրվագծերի և ձևի պահպանմանը: **Ջուրն** ինքնին, առանց արտաքին որևէ ազդեցության, բնույթով սառն է և խոնավ: Նրա զգայելի որակներն էլ սառնությունն ու խոնավությունն են: Խոնավությունը ջրի բնության մեջ դրված ունակություն է՝ փոքր պատճառից քայքայվելու և վերածվելու մանրագույն մասնիկների, մինչև լիակատար տարրալուծում¹⁰: Սակայն ջրով ապահովվում է նաև իրերի փափկությունն ու դյուրափոփոխությունը, այնպես, որ դրանց մասերին հնարավոր լինի տալ ցանկալի կազմվածքը, ուրվագիծը և համաչափությունը: Խոնավ ամեն բան հեշտորեն կորցնելով իր ձևը, նույն հեշտությամբ էլ վերագտնում է այն: Ամեն անգամ, երբ չորը խառնվում է խոնավին, այն հեղուկից՝ հեշտությամբ ձգվելու, լայնանալու և այլ ուրվագծեր ընդունելու հատկություն է ստանում, իսկ խոնավը չորից ստանում է ունակություն՝ ամուր պահելու իր մեջ առաջ եկած ձևն ու համաչափությունը: Չորը խոնավի շնորհիվ միավորվում է և չի փշրվում, իսկ խոնավը չորի շնորհիվ միասնական է պահվում և չի հոսում:

Օդի բնույթը տաք է և խոնավ: Այն իրերը դարձնում է փխրուն, անոսր, թեթև և անջատ: **Կրակը** տաք և չոր է: Գտնվելով իրերի մեջ, այն օգնում է, որպեսզի դրանք հասունանան, նոսրանան և խառնվեն: Կրակը հոսում է նրանց միջով՝ տանելով օգեղեն էությունը, որպեսզի երկու ծանր տարրերի՝ հողի և ջրի, մաքուր սառնության հատկությունը կոտրվի: Երկու ծանր տարրերը (հողն ու ջուրը) օրգանների լինելության և նրանց դադարի վիճակի համար են, իսկ երկու թեթև տարրերը (օդն ու կրակը)՝ պնևմաների լինելության և նրանց շարժման մեջ գտնվելու համար¹¹:

⁹ Ибн Сина, ч. 1, с. 31.

¹⁰ Նույն տեղում, էջ 21:

¹¹ Նույն տեղում:

Ըստ այս պատկերացումների՝ ավելի առարկայական էին դառնում այն փոփոխությունները, որոնք կատարվում էին օրգանիզմում՝ այս կամ այն հեղահյուսվածի, և հետևաբար՝ դրան համապատասխանող տարրի ավելացման կամ պակասի, կամ էլ որակական ձևափոխությունների ժամանակ:

Չորս տիեզերական տարրերի զուգահեռությամբ ձևավորված կենսական հեղահյուսվածից յուրաքանչյուրին՝ ըստ իր հատկանիշների և գործառույթների, վերագրվում էր մարմնում՝ իր բնական տեղակայման վայրը: Ըստ Ամիրզովլաթ Ամասիացու, մարմնում լորձի կամ ֆլեգմայի բնական տեղակայման վայրը թոքն է: Շնչառության ընթացքում այն դուրս է գալիս քթով և բերանով (ինչպես հարբուխի ժամանակ): Արյան ձևավորման և բնական տեղակայման վայրը լյարդն է, բայց հավաքվելով սրտում, այն բաժանվում և շրջանառում է երակներով ու զարկերակներով: Իսկ երբ անոթներում արյան քանակը մեծանում է, սա նույնպես դուրս է գալիս քթով, քանի որ այլ ճանապարհ չունի (օրինակ, հիպերտոնիկ նոպայի ժամանակ քթից արյունահոսությունը): Դեղին մաղձը սովորաբար գտնվում է լյարդի տակ՝ լյարդին կցված լեղապարկի մեջ: Համարվում էր, որ շնչելիս մաղձը դուրս է գալիս ականջներով և ծծումբը, որը մենք հեռացնում ենք ականջներից, դեղին մաղձ է: Սև մաղձի բնական տեղը փայծաղն է, թեպետ այս հեղահյուսված օրգանիզմում կատարվող բոլոր գործընթացների արդյունքում ավելացած մնացորդային նյութն է, որը կարող է ձևավորվել թե՛ ստամոքսում, թե՛ լյարդում, թե՛ անոթների մեջ՝ մյուս երեք հեղահյուսվածի այրման հետևանքով: Ըստ ընդունված կարծիքի, սև մաղձը մարմնից դուրս է գալիս աչքերով՝ արտասուքի մեջ, առաջացնելով այրոցի զգացողություն¹²:

Ըստ Գալենոսի, գոյություն ունեցող ինը տեսակի մարմնական խառնվածքներից՝ ութը «վատախառն են» և միայն մեկը՝ բարեխառն: Հենց այս վերջին՝ բարեխառն խառնվածքից համակցվել է մարդը¹³: Այսինքն, Աստված մարդուն շնորհել է առավելագույն հավասարակշռված խառնվածքը, որը կարող էր լինել մեր անընդհատ փոփոխվող և շարունակ կայացող աշխարհում: Բայց նա տարբեր խառնվածքներով է օժտել մարմնում գտնվող օրգանները: Ինչպես չորս կենսական հեղահյուսվածը մարմիններ են՝ ծնված տարրերի առաջին համադրումից, այնպես էլ օրգանները մարմիններ են՝ ծնված այդ հեղահյուսվածի առաջին խառ-

¹² Ամիրզովլաթ Ամասիացի, Ուսումն քժշկութեանն է այս, համեմատական բնագիրը, ներածությունը, ծանոթագրությունները՝ Դ. Կարապետյանի, Երևան, 2014, էջ 20:

¹³ Նեմեսիոս Եմեսացի, Մարդու բնության մասին, գրաբարից թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Կ. Մոսիկյանի, Երևան, 2021, էջ 92:

նումից¹⁴: Եվ Աստված յուրաքանչյուր օրգանի շնորհել է այնպիսի խառնվածք, որն առավելագույնս հարմար և պիտանի է նրա կենսագործունեության, գործառույթների և հնարավորությունների իրացման համար: «Բայց դրա հաստատումը փրկիսոփայի գործն է, ոչ թե բժշկի», - նկատում է Ավիցենան¹⁵:

Այսպիսով, ըստ հումորալ տեսության, մարմնական շորս որակները տարբեր մարմիններում անհատական հարաբերակցության մեջ են գտնվում միմյանց հետ, և դրանց հետ կապված ցանկացած տեղաշարժ խախտում է ողջ հավասարակշռությունը: Փորձելով վերականգնել այն, մարմինը որոշակի գործողություններ է իրականացնում: Եվ կարևոր էր այդ գործընթացում օգնել նրան՝ ոչ թե խանգարել: Իսկ օգնելու համար անհրաժեշտ էր իմանալ ոչ միայն ամբողջ մարմնի, այլ նաև գործընթացին մասնակից օրգաններին բնորոշ հատկանիշները, այդ օրգանների փոխազդեցությունն ու դրանց գործառույթների փոխապայմանավորվածությունը:

Մարմնում ամենատաքը համարվում էր կենսաշունչը կամ պնևման, ինչպես նաև սիրտը, որը պնևմայի առաջացման վայրն է: Ապա հետևում էր արյունը: Թեպետ կար համոզմունք, որ արյունը ծնվում է լյարդում, բայց դրա սերտ կապվածությունը սրտի հետ բացատրում էր ջերմության այնպիսի քանակի առկայությունը նրանում, որը շունքը լյարդը: Իր բնական տաքության աստիճանով հաջորդն, այնուամենայնիվ, հենց լյարդն էր, քանի որ իր կազմության մեջ այն նմանեցվում էր արյան թանձրուկի: Ապա հետևում էին թոքերն ու արտաքին փափուկ հյուսվածքները: Վերջիններիս ավելի քիչ ջերմության պաշար էր վերագրվում՝ նրանց միջով անցնող սառը նյարդաթելերի պատճառով: Աստիճանաբար տաքության քանակը պակասում էր մկաններում, փայծաղում և երիկամներում: Զարկերակների տաքությունը պայմանավորվում էր գուտ նրանց մեջ շրջանառող պնևմայով և արյամբ, իսկ երակներինը՝ միայն արյամբ: Ամենավերջինն՝ իր խառնվածքով, ձեռքի ափի հավասարակշռված մաշկն էր (որտեղ տաքությունն ու սառնությունը գրեթե հավասար են):

Մարմնում ամենասառը համարվում էր լորձը, ապա ըստ հերթականության՝ ճարպերը, մազերը, ոսկրերը, աճառները, կապանները, ջլերը, թաղանթները, նյարդերը, ողնուղեղը, գլխուղեղը՝ ցանկը դարձյալ եզրափակվում էր հավասարակշռված մաշկով:

Ամենամեծ խոնավությունը կրկին վերագրվում էր լորձին, հաջորդ տեղում էին՝ արյունը, ճարպը, ներքին ճրագուն, գլխուղեղը, ողնուղեղը, կրծքագեղձի և

¹⁴ Ибн Сина, ч. 1, с. 43.

¹⁵ Նույն տեղում, էջ 29:

ձվարանների հյուսվածքը, թոքերը, լյարդը, փայծաղը, երիկամները, մկանները և վերջում՝ մաշկը:

Ամենաշորը մարմնում համարվում էին մազերը, քանի որ կար համոզմունք, թե դրանք կազմվում են մաշկից արտազատվող ծխանման արտադրուկներից, որոնցից անշատվել ու հեռացել է նրանց մեջ եղած գոլորշու խառնուրդը և ծխի մաքուր սկիզբը թանձրացել է¹⁶: Ապա հետևում էին ոսկրերը, որոնք մազերից խոնավ են, քանի որ առաջանում են արյունից: Հետո հերթականությանմբ՝ աճառներն են, կապանները, ջլերը, թաղանթները, զարկերակները, երակները, շարժիչ նյարդերը, սիրտը, զգայական նյարդերը և վերջում, ինչպես միշտ՝ մաշկը:

Այսպիսով, ամենահավասարակշռված օրգան էր համարվում մաշկը, որի վրա գրեթե հավասար էր դիտվում երակների և արյան՝ տաքացնող, ինչպես նաև, նյարդերի սառեցնող ազդեցությունը: Մաշկի առավել հավասարակշռված հատված էր համարվում ձեռքի մաշկը, հատկապես՝ դաստակը, իսկ ավելի ճշգրիտ՝ ափի և մատների մաշկը: Ամենահավասարակշռվածը ցուցամատի մաշկն է, հատկապես նրա եղնգային թումբը: Այդ պատճառով ցուցամատի (նաև մյուս մատների) եղնգային թմբի մաշկը գրեթե միշտ իր խառնվածքի ուժով դատում է շոշափելի իրերի հատկությունների մասին, ինչպես դատավորը, որը երկու կողմին էլ միատեսակ հակված լինելով՝ զգում է, թե կողմերից ո՞րն է հեռացել միջանկյալ սահմաններից և արդարադատությունից¹⁷:

Սա այն կարգն է, որ նկարագրել և հաստատել է Գալենոսը¹⁸: Ավիցենան նույնպես հայտնում է, որ այդպես էր ուսուցանում Գալենոսը¹⁹, սակայն նա հայտնում է նաև, որ կյանքի ընթացքում օրգանների բնածին խառնվածքը կարող է փոփոխվել, քանի որ յուրաքանչյուր օրգանի բնածին խառնվածքը նման է այն ամենին, ինչով այն բնականորեն սնվում է, իսկ ձեռքբերովի խառնվածքը՝ ինչ կուտակում է իր մեջ: Հետևաբար, թեպետ թոքերն իրենց էությունմբ և բնածին հատկություններով շատ խոնավ չեն, որովհետև սնվում են դեղին մաղձի հետ խառնված ամենատաք արյամբ և լյարդն իր բնությունմբ շատ ավելի խոնավ է, քան թոքերը, սակայն թոքերը շատ են թրջվում դրսից (շնչառության ընթացքում): Շարունակական թրջումն անհամեմատ ավելացնում է դրանց խոնավությունը²⁰:

¹⁶ ՄՄ 5611 (ԺԳ. դար), ք. 118բ: Անանուն հայ հեղինակի «Ի չորից գոյացեալ...» գրվածքն է՝ մարդու կազմության և բնախոսության մասին, որն անցյալում վերագրվում էր Գրիգոր Նյուսացուն:

¹⁷ *Ибн Сина*, ч. 1, с. 27.

¹⁸ *Гален Клавдий*, т. 1, «Три комментария на книгу Гиппократа О природе человека».

¹⁹ *Ибн Сина*, ч. 1, с. 30.

²⁰ Նույն տեղում:

Նեմեսիոս Եմեսացին պնդում է, որ անոթի հատման ժամանակ արյան մեջ կարելի է տեսնել բոլոր մյուս հեղահյուսվածքները, և անգամ՝ դրանցից որևէ մեկի գերակշռությունը²¹: Ավիցենան՝ վկայակոչելով Գալենոսին, նույնպես հայտնում է, որ արյունը խառնված է մյուս երեք հյուսվածքի հետ, և դրանցից զատվում է, երբ այն տեղակայում են անոթի մեջ, և մի որոշ ժամանակ թողնում դադարի վիճակում: Արագ տարրալուծվելով շերտերի՝ անոթի ամենավերևում առանձնանում է փրփուրը կամ դեղին մաղձը, ձվի սպիտակուց հիշեցնող միջին շերտում լորձն է, իսկ ներքևի նստվածքը՝ սև մաղձը: Այս ամենի հետ միասին նկարագրվում էր նաև ջրային առանձին զանգված, որը հեղահյուսվածքի մաս չէր համարվում: Թեպետ այն օրգանիզմ էր մտնում ըմպելիքների հետ, սակայն սննդարար նշանակություն չուներ: Դրա դերը համարվում էր կերակրի նոսրացումն ու փոխանցումը, որից հետո այն դուրս էր գալիս մեզի հետ: Այսպիսով, միջնադարյան պատկերացումներով պարզ ջրի դերը խիստ սահմանափակվում էր: Մինչդեռ կենսական հեղահյուսվածքը՝ ձևավորվելով սննդարար կերակուրների և սննդարար ըմպելիքների (լուծույթների, թուրմերի, եփուկների) արդյունքում, պատասխանատու էին համարվում օրգանիզմի բոլոր գործընթացների համար: Ըստ որում, «սննդարար» ասելով, հասկացվում էր այնպիսի մի բան, որն ընդհանրություն ուներ մարմնի հետ: Իսկ այն, ինչ նման է մարդու մարմնին, չի կարող պարզ մարմին լինել, այլ պետք է լինի խառնուրդ: Մինչդեռ ջուրը պարզ մարմին է²²:

Հեղահյուսվածքի փոփոխություն արդյունքում մարմնում առաջացած պակասի լրացման և անհրաժեշտ նյութերով ապահովման համար պետք էր ճիշտ ընտրված սնունդ, դեղամիջոցներ, որոնց նույնպես վերագրվում էր որոշակի խառնվածք, քանի որ ողջ նյութական աշխարհն է կազմված չորս տարրերի այս կամ այն համակցությամբ: Ամիրդովլաթ Ամասիացին նկատում է, որ՝ ասելով, թե դեղանյութը (կամ կերակուրը) տաք է կամ սառը, խոնավ կամ չոր, պետք է հասկանալ, որ դրա ազդեցությունից մարմնում առաջանում է որակ (տաքություն, սառնություն, չորություն, խոնավություն), որը գերազանցում է սովյալ մարդու բնական խառնվածքին բնորոշ չափը: Ըստ որում, օրգանիզմ ներմուծված ցանկացած նյութ փոփոխվում և որոշակի որակներ է ընդունում մարդու մարմնում, վերջինիս բնության ակտիվ ազդեցության տակ, ինչն ի կատար է ածվում մարմնի բնածին տաքության միջոցով: Միևնույն ժամանակ, գոյություն ունի այսպես

²¹ Նեմեսիոս Եմեսացի, *Մարդու բնության մասին*, 2021, էջ 114:

²² Ибн Сина, ч. 1, с. 42.

կոչված «դեղորայքային սնունդ» հասկացությունը, որն իր բնույթով մոտ լինելով մարդկային մարմնին, շտկում է նրա բնության տվյալ պահի շեղումները և վերադարձնում իր նախնական վիճակին²³:

Գրիգոր Մագիստրոսի նկարագրությամբ՝ ինչպես սերմն է իր մեջ ամփոփում յուրաքանչյուր օրգանի բնության և էներգիայի ինչ-որ մասը, այդպես էլ սնունդն է իր մեջ կրում ցանկացած օրգանի զորությունը և տրամադրում այդ օրգանին հարկավոր տարրերը: Այսպես, թափանցիկ, մաքուր և ամենանուրբ տարրերը նա տրամադրում է ուղեղին, սրտին, լյարդին և մյուս գլխավոր օրգաններին, դառը և մուգ դեղին ջուրը՝ լեղապարկին, մնացած սև և թանձր նստվածքը՝ փայծաղին, ջուրը՝ միզապարկին: Այս բոլոր տարրերը կարծես գտվում են. գտումից հետո մնացած արյունանման զանգվածը լյարդում վերածվում է արյան²⁴:

Նույն դեղորայքը կամ սնունդը տարբեր հիվանդությունների ժամանակ կարող է օգտակար կամ վնասակար լինել՝ իրեն բնորոշ այս կամ այն որակի և դրա ուժի որոշակի աստիճանի շնորհիվ: Այդ պատճառով, հարկ էր նախապես ճիշտ հաշվարկել, թե տվյալ դեղամիջոցի ո՞ր որակը և ի՞նչ կերպ կարող է օգտակար լինել տվյալ հիվանդության ժամանակ: Օրինակ, սկամոնիան²⁵, որ բնությամբ տաք է, կարող է առաջ բերել մարմնի սառեցում, քանի որ իր թուլացնող (լուծողական) ազդեցությամբ օրգանիզմից հանում է տաք դեղին մաղձը: Հետևաբար, դեղանյութերի ընտրության ժամանակ կարևոր էր պարզել դեղի բնությունը (տաքություն, սառնություն, չորություն, խոնավություն), սրանից բխող գործող սկիզբը (մանրացնող, նոսրացնող, չորացնող) և դեղի գործառությունը, որ կապվում էր և՛ բնության, և՛ գործող սկզբի հետ: Օրինակ՝ երբ ասում էին, որ դեղն ունի միզամուղ ներգործություն, դա բխում էր խցանումը բացելու նրա հատկությունից, որի շնորհիվ աննշան տաքության և նուրբ էության (կազմության) օգնությամբ այն մարմնից դուրս էր հանում գազերն ու ավելորդ հեղուկները²⁶: Հետևաբար, պարզ, անխառն դեղորայքը մարդու համար համարվում էր տաք կամ սառը, խոնավ կամ չոր՝ կախված մարդու տվյալ պահի խառնվածքի վրա դրա ունեցած ազդեցությունից:

²³ Ամիրտովլաթի Ամասիացոյ Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց, ի լոյս ընծայեաց Գ. Յ. Բամաջեան, Վիաննա, 1926, էջ 3:

²⁴ Л. А. Оганесов, *История медицины в Армении, от древнейших времен до конца XVIII столетия*, предисловие С.М. Лазарева, Ереван, 1928, с. 72.

²⁵ Convolvulus scammoniae՝ բույս, որի արմատներից ստացվող խեժը օգտագործում էին որպես լուծողական:

²⁶ Ամիրտովլաթի Ամասիացոյ Անգիտաց անպէտ, էջ 8:

Ըստ Ամիրգոզվաթի²⁷, դեղերի հատկությունների մասին նախնական տեղեկություն կարելի է ստանալ՝ դիտարկելով դրանց լուծելիության աստիճանը, չորացման (գոլորշիացման) արագությունը, համը, հոտը, գույնը²⁸:

Ամիրգոզվաթ Ամասիացին, իր նախորդների նման, խիստ կարևորում էր դեղամիջոցի ուժի աստիճանը: Նա պնդում էր, որ կիրառվող դեղորայքի ուժը պետք է համապատասխան լինի հիվանդության ուժին: Այդ պատճառով, նախ հարկավոր էր պարզել հիվանդի բնության գերտաքացման (կամ գերսառեցման, շափազանց չորության կամ խոնավության) աստիճանը և տալ այնպիսի դեղամիջոց, որն ուներ սառնության (կամ մյուս որակների) համապատասխան աստիճան և կարող էր մարմնի բնությունը վերադարձնել իր նորմալ վիճակին՝ չվնասելով նրան²⁹: Իր «Անգիտաց անպէտ»-ում Ամիրգոզվաթը հայտնում է բնության ուժերի չորս աստիճանների մասին, բացի լիովին հավասարակշռված խառնվածքներից, որտեղ չորս հիմնական որակներից ոչ մեկը գերակայություն չունի: Ցանկացած որակի առաջին աստիճանի ուժը թեթև հավասարակշռող ադեցություն է ունենում, և ավելի հաճախ հանդես է գալիս իբրև օգտակար սնունդ և ոչ թե դեղամիջոց: Ուժի երկրորդ աստիճանը փոփոխում է առկա խառնվածքը, սակայն, ինչպես գրում է Ամիրգոզվաթը՝ հիվանդություն չի առաջացնում, այսինքն՝ չի վնասում: Երրորդ աստիճանն ավելի նշանակալի ազդելով, կարող է նաև հիվանդություն առաջացնել, այսինքն՝ խառնվածքի մեջ անցանկալի փոփոխություն կատարել: Չորրորդ աստիճանը վտանգավոր է այնքան, որ կարող է մահ առաջ բերել: Այս ամենն ի նկատի ունենալով, նա խորհուրդ էր տալիս պատրաստել տվյալ իրավիճակին համապատասխան բաղադրյալ դեղեր, որտեղ բաղադրամասերի դեղաչափերի հաշվարկը կատարվում էր հիվանդի խառնվածքային շեղումները հավասարակշռող որակի ստացման միտվածությամբ: Ամիրգոզվաթ Ամասիացին այս մոտեցումները ներկայացնում է համաձայն Գալենոսի ուսմունքի, սակայն ամենայն հավանականությամբ, նրա աղբյուրները եղել են արաբ բժշկապետերը, որովհետև գործածած եզրերն արաբերեն են: Այս տեղեկությունները՝ շատ մոտ ձևակերպումներով, գտնում ենք նաև Ավիցենայի մոտ³⁰:

Ինչպես «Անգիտաց անպէտ»-ում, այնպես էլ «Ախրապատին» աշխատության «Դուռան յիշե զդեղերուն զօրութին և զանուանք է. լեզուօք» գլխում Ամիր-

²⁷ Նաև Ավիցենայի, Գալենոսի և մյուսների:

²⁸ **Ամիրգոզվաթի Ամասիացույ Անգիտաց անպէտ**, էջ 5:

²⁹ Նույն տեղում:

³⁰ **Абу Али ибн Сина**, ч. 1, с. 102.

դովլամը դեղամիջոցների հիմնական որակների քննությունը սկսում է դրանց համի վերլուծությամբ³¹: Ըստ նրա, համերն ամենաշատ տեղեկությունն են տալիս դեղանյութի բնության և հատկությունների մասին: Բնության չորս տարրերի համապատասխանությունը, համերը բաժանվում են հետևյալ կերպ.

1. Իրական փոթոթահամը հողի բնությունն ունի,
2. Թթու համը բնությամբ նման է ջրին,
3. Յուղալին կամ ձիթահամն ունի օդի բնություն,
4. Սուրը նման է կրակին,
5. Տտիպն իր մեջ միավորում է հողի և ջրի բնությունը,
6. Քաղցրը՝ հողի և օդի,
7. Դառը՝ հողի և կրակի,
8. Աղին՝ հողի, ջրի և կրակի:

Այսպիսով, չորս տարրերին համապատասխանող պարզ համերը չորսն են՝ փոթոթահամ (հող), թթու (ջուր), յուղահամ (օդ) և սուր (կրակ): Մյուս չորսի բնությունը խառն է: Հետևաբար, տտիպը պարունակում է փոթոթի և թթվահամի մասնաբաժին, դառը՝ փոթոթի և սուրի, քաղցրը՝ փոթոթի և յուղահամի, իսկ աղին՝ փոթոթի, թթվի և սուրի, ինչպես նաև սուր և տտիպ համերի: Պատահում է նաև, որ բնականորեն նույն մթերքի մեջ համադրվում են երկու համ կամ նույնիսկ մի քանի: Օրինակ, մեղրն ունի քաղցրություն և սրություն, սերկևիլը՝ փոթոթահամ է և թթու, իսկ ագարիկը՝ դառն է և քաղցրահամ:

Ըստ բնության տարբերում են.

Բնությամբ տաֆ համեր	Սուր (նսր)	Դառը (խիտ)	Աղի (միջին)
Բնությամբ սառը համեր	Թթու (նսր)	Տտիպ (խիտ)	Փոթոթ (միջին)
Չափավոր համեր	Յուղային (նսր)	Քաղցր (խիտ)	Անհամ (միջին)

«Սակայն բնությունը նույն ակունքից է խաղողին տալիս քաղցրություն և «լուծութիւն»³², նաև գինու առատություն, «որ ուրախարար է սրտի», – գրում է Իշոխը: Նույն աղբյուրից են նաև սերկևիլի փոթոթ համը, դրա կապող հատկությունն ու սառնությունը, նաև դամոնի³³ լուծությունը, սառնությունն ու քաղց-

³¹ Ամիրտովլաթի Ամասիացոյ Անգիտաց անպէտ, էջ 6-8: Տե՛ս նաև ՄՊ 4607, ք 1ա-79ա (ժԸ դար, Ամիրտովլաթ Ամասիացոյ՝ դեղերու զօրութիւն):

³² Կակդոսյուն, նոսրություն:

³³ Սև սալորի տեսակ:

րուվյունը, ինչպես նաև՝ խնձորի քաղցրուվյունն ու կապող հատկուվյունը, թզի քաղցրուվյունը, կակղուվյունն ու ջերմուվյունը, կաղնու չորուվյունը, սառնուվյունը և կապող հատկուվյունը, ընկույզի քաղցրուվյունը, չորուվյունը և տաքուվյունը, ձիթենու և բեեկենեու յուղալիուվյունը, պղպեղի թփի հավելյալ ջերմուվյունը: Բնուվյամբ տաք են ստեղծվել նարդոսը (սմբուլ), մեխակը (ղարանփուլ), քրքումը (զաֆրան), կոճապղպեղը (զանճապիլ, իմբիր) և այլն: Բնուվյունը սառնուվյամբ է օժտել դդումը, վարունգը, խըթան (կուվթային, կօդայ, շինգղ, դդմագգի բուլս է), մանուշակը, ջրաշուշանը (նունուֆար), քափուրը (քափուր, կամֆորա), որը հնդիկներն աճեցնում են խաղողների մեջ³⁴:

Ամիրդովլաթ Ամասիացին հայտնում է.

- * Սուր (կծու) համով դեղերը կրակի բնուվյուն ունեն: Դրանց տաքուվյունը չափազանց շատ է և նրանք բնուվթագրվում են նոսրացնող, վլացող, նաև լուծող ու այրող հատկուվյուններով՝ արտահայտված տաքուվյան և ջրիկացնող էուվյան շնորհիվ:
- * Դառը համին հատուկ է ուժեղ մաքրող և պոկող, անջատող հատկուվյունը՝ նույնիսկ առանց նշանակալի տաքուվյան:
- * Աղի համին բնորոշ չէ մաքրող հատկուվյունը, սակայն չունենալով տաքուվյան ավելցուկ և խառը լինելով տոտիպուվյան հետ, այն հեռացնում է «բորբոսը», այսինքն, մանրէասպան է:
- * Թթուն ունի կապող, սառեցնող և չորացնող հատկուվյուններ, բացում է խցանումները և անցանելի է դարձնում աղիները՝ վանալով դրանք:
- * Տոտիպ համով դեղերը սառեցնում ու թանձրացնում են հյուվթերը:
- * Յուղալին կամ ձիթահամը չափավոր է և մեղմ:
- * Փոթոթ համին բնորոշ է սառեցնող և չորացնող հատկուվյունը:
- * Քաղցրը թուլացնող է և մարսում է հյուվթերը՝ նույնիսկ աննշան տաքուվյան պայմաններում:
- * Անհամ դեղերը խոնավեցնում են, փափկացնում և թուլացնում³⁵:

Պատահում է նաև, որ նույն դեղամիջոցը՝ ունենալով խառը բնուվյուն, ի հայտ է բերում երկու նյուվթերի հատկանիշներ, օրինակ դեղը՝ լինելով դառը (որի բնուվյունը պետք է, որ տաք լիներ), միևնույն ժամանակ բնուվյամբ սառն է և հոտավետ: Դա տեղի է ունենում սառը բնուվյամբ հոտավետ նյուվթի առկայու-

³⁴ Իշոխ, Գիրք ի վերայ բնուվթեան, Բն. բնագիրը, գրաբարից՝ ռուսերեն թարգմանությունը և առաջաբանը Ս. Վարդանյանի, Երևան, 1979, էջ 89:

³⁵ Ամիրտովլաթի Ամասիացույ Անգիտաց անպէտ, էջ 6-8:

թյան պատճառով, որը, չկարողանալով փոխել դառը համը, քանի որ չունի սեփական համ, այնուամենայնիվ, ինքն է որոշում դեղամիջոցի ուժն ու ներգործությունը: Այսպես, օրինակ, ափիոնը՝ ունենալով չափազանց դառը համ, պետք է որ ունենար նշանալի տաքություն, բայց նրա բնությունը սառն է, քանի որ նրա հիմնական ուժն ու ներգործությունը բնութագրվում է սառը սկզբով, որը համ չունի: Կամ՝ մի քիչ հալվեախեժը կաթը դարձնում է դառը, բայց չի փոխում նրա բնությունը: Նույն կերպ էլ՝ մեկ դրամ դառը օշինդրը մեկ տիկ նորաքամ, չհասունացած գինու («քաղցու») հետ խառնելիս՝ փոխում է վերջինիս համը, բայց ոչ բնությունը և բնավ չի խանգարում նրա որակների դրսևորմանը³⁶:

Բացի այդ, կար կարծիք, որ քաղցր կերակուրները՝ մեղրը, խաղողը, շամիչը, արյունաստեղծ են: Կծուն, աղին գոյացնում են դեղին մաղձ: Դառը նույնպես դեղին մաղձ է առաջացնում, բայց այլ տեսակի: Թթուն և սառը գոյացնում են սև մաղձ: Միայն սառը բնությունն է ակտիվացնում լորձի արտադրությունն օրգանիզմում³⁷:

Ինչպես վերևում նկատվեց, դեղամիջոցի բնույթի նախնական որոշման համար կարևոր նշակություն էր տրվում նաև հոտերին: Եթե հոտավետ նյութը բնությամբ տաք էր, նրա անուշահոտությունը հայտնում էր տաքության նոսր էության մասին, իսկ զարշահոտությունը՝ բորբոսի (կամ մանրէների) վնասակար տաքության: Հոտի բացակայությունը, սովորաբար, կապվում էր նյութի սառը բնության հետ: Բայց, ըստ Ամիրգովլաթի, հոտերը վստահելի չափորոշիչ չեն, ինչպես նաև՝ գույնը: Նա օրինակ է բերում պղպեղը, որ ունի սպիտակ գույն և օժտված է տաք բնությամբ: Սակայն սանտալը նույնպես սպիտակ է, չնայած դրան՝ ունի սառը բնություն³⁸: Բացի այդ, նույն նյութն իր տարբեր մասերում կարող է հանդես գալ հակառակ որակներով: Երբեմն այդ որակները հնարավոր չէ իրարից առանձնացնել, երբեմն էլ՝ հեշտությամբ առանձնանում են: Օրինակ, կաթից կարելի է հեռացնել շիճուկը, ինչպես նաև հարելով առանձնացնել կարագը, այդ կերպ բաժանելով նաև այդ մասերին բնորոշ որակները: Իսկ երիցուկի երկու հակադիր որակները՝ լուծող և պնդացնող, եփելիս չեն առանձնանում և չեն փոփոխվում, քանի որ նրա բնությունն ամուր է: Սոխն ունի խոնավության ավելցուկ և այրող որակներ, բայց երբ այն եփում են, այդ որակները փոփոխվում են: Կաղամբը, որն օժտված է թանձր հողային բնությամբ և պնդացնող որակներով, միևնույն ժամանակ ցուցաբերում է մեղմ թուլացնող ազդեցու-

³⁶ Նույն տեղում, էջ 7:

³⁷ Իշոխ, էջ 103:

³⁸ Ամիրտովլաթի Ամասիացոյ Անգիտաց անպէտ, էջ 8:

թյուն: Երբ այն եփում են, այդ երկու ուժերն առանձնանում են իրարից՝ ջուրը թուլացնող ազդեցություն է ունենում, իսկ տերևները՝ պնդացնող: Այդպիսին են ոսպը, ճարճատուկը և վարդը: Պատճառը դրանց խառը բնությունն է: Ավելի բարդ բնություն ունեն արհեստական պատրաստված դեղորայքային խառնուրդները, որոնց հակառակ սկզբները դժվար են զանազանվում, ի տաբերություն բնական դեղամիջոցների:

Ինչպես վերևում նշեցինք, խառնվածքային շեղումների հավասարակշռման համար միջնադարում կիրառում էին հիվանդության բուժման և խնամքի ընդհանուր մոտեցումներ: Հնարավոր է, որ տարբեր բժիշկներ, հատկապես, եթե նրանք ապրում էին տարբեր երկրներում, նույն հիվանդության բուժման համար օգտագործեին տարբեր դեղամիջոցներ, բայց դրանց ընտրությունը կատարվում էր որոշակի համընդհանուր տրամաբանությամբ: Մասնավորապես, նախքան որևէ հիվանդության ախտանիշների դեմ դեղորայքային պայքարը, նրանք փորձում էին օրգանիզմից դուրս հանել այն հեղահյուսված, որի ավելցուկը բերել էր մարմնի բնության խախտման: Իսկ դրա համար, նախ պետք էր հասունացնել ախտածին նյութը և բերել այնպիսի նրբության, որը թույլ կտար դրան դուրս գալ մարմնից՝ առանց վերջինիս համար տհաճ հետևանքների: Ախտածին հեղահյուսվածի հասունացմանը նպաստող դեղամիջոցներ էին համարվում՝ սուսամբարը, դափնու տերևը, օշինդրը, հազարատերևուկը (վիրախոտ), ջրային եղեգը (ազոավածաղիկ), երիցուկը, իշառվույտը, սամիթը, գաղձը, ուրցը, հիսոպը (անանուխի ցեղ է, գոպան), գաճաճ անանուխը և այլն: Այս անունները կարելի է գտնել թե՛ Ավիցենայի, թե՛ Ամիրդովլաթի, թե՛ Մխիթար Հերացու աշխատություններում: Հասունացումը պահանջում էր որոշակի ժամանակ: Օրինակ, Ավիցենան նշում էր, որ սև մաղձի հասունացման ժամկետը 15 օր է³⁹: Արդեն հասունացած հեղուկի դուրս բերումն ուղեկցվում էր ինչպես հիվանդության տարբեր ախտանիշների դեմ դեղորայքային բուժմամբ, այնպես էլ սննդի վերահսկմամբ, բույրաբուժությամբ, գունաբուժությամբ, երաժշտաբուժությամբ, մերսմամբ, լոգանքներով և բուժական այլ միջոցառումներով:

Ջամբատիստա դելլա Պորտան (1535-1615) իր «Բնագննություն» երկում, որը Ֆրանչեսկո Ստելլուտիի համառոտմամբ, Ժէ. դարում հայերեն է թարգմանել Հովհաննես վարդապետ Կոստանդնուպոլսեցին, որը սակայն հրատարակված չէ, դարձյալ վկայակոչելով Գալենոսին, պնդում էր, որ կերակուրներն ու ջանասիրաբար ձևավորված ճիշտ սովորությունները՝ փոփոխելով մարդկանց խառն-

³⁹ Ибн Сина, ч. 2, с.38.

վածքը և դրանք կարգավորելով, կարող են նույնիսկ դարձնել մարդուն ավելի խելացի, խոհեմ, ուշիմ, արդարամիտ և ազնիվ⁴⁰: Հետևելով Գալենոսին⁴¹, դելլա Պորտան մանրամասն վերլուծում է, օրինակ, թե ինչպես կարող է անգետ մեկը դառնալ գիտուն՝ բարելավելով իր բնակությունը պայմանները, կարգավորելով սննդակարգը, կիրառելով թունագերծող միջոցներ, գլուխն օժելով խոնավությունը պակասեցնող քսուքներով և իր մոտ կրելով համապատասխան թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր⁴²: Նա բուժման նույնատիպ սխեմաներ է առաջարկում մոռացկոտ մարդու հիշողությունը լավացնելու⁴³, անիրավին՝ արդար դարձնելու⁴⁴, տխրությունն ուրախության փոխարկելու⁴⁵ և այլ նմանատիպ խնդիրների լուծման համար:

Այսպիսով, մարմնի խառնվածքն էր դրվում տարբեր վատ սովորությունների և հոգեբանական խնդիրների հիմքում: Օրինակ, ծայրահեղ խոնավությունը համարվում էր անգիտության հիմնական ֆիզիկական պատճառը, քանի որ այն թաղանթի նման պարուրելով գլխուղեղը, փակում էր հոգու մուտքը դեպի «խելքի ընդունարան»⁴⁶: Սակայն բարեխառն խոնավությունը լավ հիշողության պարտադիր պայման էր: Ակնհայտ է, որ երիտասարդ, խոնավ խառնվածքը լավ հիշողություն է ձևավորում, իսկ ծեր մարդկանց չոր խառնվածքը բերում է մոռացկոտություն: Չորությունը՝ կոպիտ կերակուրի և հողմոտ տեղանքի զուգակցմամբ, դառնում է նաև վայրենաբարոյության պատճառ⁴⁷:

Ըստ դելլա Պորտայի, բարկությունն առաջանում է չափազանց տաք խառնվածքից և արյան առատությունից, որն այդ տաքության հիմնական պատճառն է: Հատկապես հողային կամ թանձր արյան մեծ ակտիվությունը հանգեցնում է ցասման և գերհուզականության: Չափազանց տաք խառնվածքը կարող է պատճառ դառնալ նաև որկրամոլության և գինեմոլության: Եվ հակառակը՝ մարմնի սառեցումից (անկախ պատճառից՝ լինի դա արյան պակաս կամ սև մաղձի ավելցուկ կամ տհաճ մտքեր և այլն) առաջանում է երկչոտություն և տխրություն:

⁴⁰ ՄՄ 2034 (ժԸ. դար), ք. 171բ: Տե՛ս նաև Կ. Մոսիկյան, «Ֆիզիոգնոմիկական երկերը Մատենադարանի ձեռագրերում», *ԲՄ* № 33, 2022, էջ 225-247:

⁴¹ Д. А. Балалыкин, А. П. Щеглов, Н. П. Шок, *Гален: врач и философ*, Москва, 2014 («О распознавании и лечении заблуждений всякой души»), с. 371.

⁴² ՄՄ 2034, ք. 172աբ:

⁴³ Նույն տեղում, ք. 173ա- 174բ:

⁴⁴ Նույն տեղում, ք. 175ա:

⁴⁵ Նույն տեղում, ք. 179ա:

⁴⁶ Նույն տեղում, ք. 171ա:

⁴⁷ Նույն տեղում:

Քնկոտության առաջացումը նա կապում էր արտահայտված սառն ու խոնավ խառնվածքի հետ, իսկ անքնությունը՝ հակառակը՝ չափազանց տաք ու չոր: Սակայն շրկամաղձությունից, կամ պարզապես՝ այրված մաղձից առաջացած նշանակալի տաք և չոր խառնվածքն արդեն դիտարկում էր ոչ թե անքնության, այլ խելագարության պատճառ: Ի հակադրություն սրան, դելլա Պորտան պնդում էր, որ սառը և չոր խառնվածքից, որ հետևանք է չայրված սև մաղձի ավելցուկի, առաջանում է մելամաղձություն կամ դեպրեսիա: Նա սառը, չոր խառնվածքի հետ էր կապում նաև ագահությունը: Միևնույն ժամանակ սառը և չոր որակների քիչ թե շատ չափավոր խառնվածքը հիանալի միջավայր էր համարում գիտելիքի ձևավորման և իմաստության զարգացման համար: Այս հարցում նա վկայակոչում է Արիստոտելին, որը հենց այս հանգամանքն է համարում այն բանի պատճառ, որ հանճարեղ մարդկանցից շատերը տառապել են մելամաղձոտությամբ: «...Նախ ի ձեռն մելամաղձի, որոյ զօրութիւնն և ուժգնութիւնն անշատելով զհոգին ի մարմնոյն տայ զբազմիցս վայելչապէս նախաճառել զիրաց վսեմից: Ուստի Արիստոտէլ յորջորջէր զՍոկրատէս մելամաղձոտ», - գրում է նա⁴⁸: Դելլա Պորտան սրտում կուտակված սև մաղձի գոլորշիների հետ էր կապում նաև կրքոտ, անպատասխան սերը, որը կարելի է բուժել ճիշտ դեղամիջոցներով և սննդակարգով⁴⁹: Գալենոսը նույնպես կրքոտ սերը համարում էր հիվանդություն⁵⁰: Ի վերջո, մարդու կենսախինդ և ակտիվ բնույթի համար, վստահաբար, պահանջվում էր բարեխառն տաք խառնվածք⁵¹:

Այս մտտեցումները միջնադարյան բժշկությունը փոխառել է առավելապես Գալենոսից, բայց նաև՝ Հիպոկրատեսից, Արիստոտելից: Ամենակարևորն այն է, որ այս բոլոր խնդիրները հնարավոր է լուծել՝ բնակավայրի փոփոխությամբ, ճիշտ սննդակարգի կազմակերպմամբ, խելամիտ ընտրված բուժական միջոցառումների և որոշակի դեղորայքի կիրառմամբ: Թեպետ կարևոր են ոչ միայն կերակուրները, այլև կրթությունը, ինչպես նաև բույսերի, կենդանիների և քարերի ճիշտ օգտագործված զորությունը, որոնցով նույնպես կարելի է փոփոխել մարդկանց խառնվածքը:

Սակայն երկրի վրա և, մասնավորապես, մարդու մարմնում կատարվող բոլոր օրգանական գործընթացներն, ըստ միջնադարյան պատկերացումների, վերահսկում են երկնային մարմինները, որոնք նույնպես բնութագրվում են որոշա-

⁴⁸ Նույն տեղում, ք. 63ա:

⁴⁹ Նույն տեղում, ք. 179բ, պր. 6, «Յաղագս, թէ որպէս սիրահարք կարեն թողոյ գտախոյսինս իւրեանց»:

⁵⁰ Д. А. Балалыкин, А. П. Щеглов, Н. П. Шок, *Гален: врач и философ*, с. 319.

⁵¹ ՄՄ 2034, ք. 173ա:

կի խառնվածքներով: Այս թեմայի մանրամասն վերլուծություն ենք գտնում դելլա Պորտայի «Բնագննություն»-ում: Իսկ Ալբերտ Մեծն այս երևույթին անդրադառնում է մի փոքրածավալ մանկաբարձական ձեռնարկում, որի Մատենադարանում առկա միջնադարյան հայերեն թարգմանությունը վերնագրված է «Գիրք, որ կոչի գաղտնի գաղտնեաց, արարեալ մեծին Ալպերտի, յաղագս գաղտնեաց կանանց»⁵²: Այստեղ նա մոլորակների ազդեցությամբ է պայմանավորում սաղմի ձևավորման և զարգացման ողջ ընթացքը:

- * Երևակը սառն ու չոր լինելով, նպաստում է սաղմի մածուցմանն ու պնդացմանը: Այն օժտում է մանկանը դատողական և տրամախոհական զորություններով:
- * Լուսնթագն իր ջերմ ու խոնավ խառնվածքով, սաղմը տրամադրում է «անդամաձևութեան» և տալիս է «լայնասրտության զորություն»:
- * Հրատը խառնվածքով ջերմ ու չոր է: Զևավորելով սաղմի վերջույթներն ու գլուխը, այն միաժամանակ նրան շնորհում է արիություն⁵³: Ըստ դելլա Պորտայի, Հրատի ազդեցությունն իր վրա կրող ջերմ ու ցամաք մարդը լինում է շատակեր, բայց հեշտ է մարսում կերածը⁵⁴:
- * Արեգակն իր տաքությամբ և շորությունով, սաղմի զարգացման շորորդ ամսում կազմում է սիրտը և հոգուն շնորհում է զգայական շարժում: Այն պատասխանատու է պտղի գիտական և հիշողական ներուժի համար:
- * Լուսաբերը տաք է և խոնավ: Նրանով ձևավորվում են սաղմի զգայարաններն ու սեռական օրգանները: Մարդու մեջ այն հեղում է տուփական և ցանկական զորություն:
- * Փայլածուն խառնվածքով ջերմ ու չոր է: Նրա ազդեցությամբ կազմվում են ձայնի գործիքները, լրացվում է տեսողական ապարատը: Այն մանկանը տրամադրում է ուրախության և հրճվանքի⁵⁵: Ըստ դելլա Պորտայի, այն նաև գույն է տալիս բոլոր թանկարժեք քարերին⁵⁶:
- * Իր լրման ժամանակ Լուսինը (լիալուսին) ցուրտ ու խոնավ է, նշում է դելլա Պորտան, իսկ արեգակի հետ շարագուգված՝ այն դառնում է ցուրտ ու չոր: Քառորդ Լուսինը՝ եթե աճող է՝ ցուրտ ու խոնավ է, իսկ եթե նվազող՝ ջերմ ու չոր: Այն լրացնում է սաղմի մարմնական թերու-

⁵² ՄՄ4607 (ԺԲ. դար), քթ. 192բ-193ա:

⁵³ Նույն տեղում:

⁵⁴ ՄՄ 2034, ք. 90բ:

⁵⁵ ՄՄ4607, ք. 193ա:

⁵⁶ ՄՄ 2034, ք. 91բ:

թյունները և աճի զորություն է տալիս նրան⁵⁷: Լուսինը մարդուն դարձնում է փոփոխական և այլայլական՝ իր տարբեր և պարբերաբար փոփոխվող որակների շնորհիվ⁵⁸:

Փորձելով ի մի բերել, ընդհանուր աղյուսակով ներկայացնենք զուգահեռների մի մասը միայն.

Տարր	Հյութ	Ռեակ	Համ	Տեղը	Եղանակ	Գույն	Մոլորակ
Հող	Սև մաղձ	Սառն ու չոր	Փոթոթ	Փայծաղ	Աշուն	Սև	Երևակ
Ջուր	Լորձ	Սառն ու խոնավ	Թթու	Թոֆ	Զմեռ	Սպիտակ	Լուսին
Օդ	Արյուն	Տափ ու խոնավ	Յուղալի	Սիրտ	Գարուն	Կարմիր	Լուսնթագ Լուսաբեր
Կրակ	Դեղին մաղձ	Տափ ու չոր	Սուր	Լյարդ, լեղապարկ	Ամառ	Դեղին	Արեգակ Հրատ Փայլածու

Ինչպես տեսնում ենք, հողի և սև մաղձի պատասխանատու մոլորակը միայն Երևակն է (Սատուրնը), իսկ ջրինն ու լորձինը՝ միայն Լուսինը, այն դեպքում, երբ օդն ունի երկու վերահսկող մոլորակ, իսկ կրակը՝ երեք: Հողն ու ջուրը ծանր տարրեր են, դրանց փոփոխելիությունը սահմանափակ է, հատկապես հողը, որի խնամակալի՝ Երևակի, ազդեցությունը կապվում է մարմնի մածման, թանձրացման, պնդացման հետ: Այսինքն, սա կոպիտ, ֆիզիկական նյութի պատասխանատուն է: Ջուրը, թեպետ նույնպես ծանր է, բայց ավելի փոփոխելի է, քան հողը: Հավանաբար, այդ պատճառով է, որ նրա խնամակալությունը հանձնված է փոփոխական լուսնին: Վերջինիս շրջափուլերին համապատասխան են կատարվում, ինչպես աշխարհի ողջ ջրային տիրույթի մակընթացություններն ու տեղատվությունները, այնպես էլ մարմնի հեղուկ նյութի պարբերական փոփոխու-

⁵⁷ ՄՄ 4607, ք. 193ա:

⁵⁸ ՄՄ2034, քք. 90բ-91ա:

թյունները: Արյունը, որ օդի օրգանական համարժեքն է, զգայականության կրողն է: Եվ հավանաբար, պատահական չէ, որ նրա հոգաբարձու մոլորակներից մեկը Լուսաբերն է կամ Վեներան, որ հռոմեական դիցաբանության մեջ սիրո ստվածուհին է (ի դեպ, Լուսաբերն անվանում են նաև Աստղիկ⁵⁹), իսկ մյուսը՝ Լուսնթագը կամ Յուպիտերն է, որ գերագույն աստվածության հոմանիշ է: Այս երկուսն էլ տիրում են սրտին, որում կարող է և՛ անսահման սեր լինել, և՛ դաժանություն: Այն կարող է և՛ հանդուրժել ու ենթարկվել, և՛ տիրել ու տիրապետել:

Կրակի պատասխանատու մոլորակները երեքն են: Արեգակը նրա տաքության և լույսի խորհրդանիշն ու ակունքն է: Հրատը (Մարսը) կրակի այրող, ոչնչացնող, պատերազմող գորությունն է: Իսկ Փայլածուն կամ Մերկուրին, որ հռոմեական դիցաբանության մեջ արվեստի, արհեստների, մոգության և աստղագիտության աստվածն էր, նաև մյուս աստվածների պատգամաբերը, հավանաբար հոգ է տանում մենտալ կրակի, այսինքն՝ մտավոր լույսի զարգացման մասին՝ որպես կրակի երրորդ նշանակություն:

Այսպիսով, միջնադարյան մտածողների պատկերացմամբ, մեծ ու փոքր աշխարհների զուգահեռությունը խիստ ընդարձակ հասկացություն է, որն իր մեջ ներառում է տարբեր շերտեր, տարբեր ոլորտներ, սակայն դրանց բոլորի ակունքը նույնն է՝ տիեզերաստեղծ չորս հրաշալի տարրերը, որոնք ամենի նախասկիզբը լինելով, շարունակում են անվերջ կառուցել ու անվերջանալի թելերով իրար կապել տիեզերքի բազմատեսակ երևույթները:

Եվ եթե բժշկական աստղաբանության գաղափարը, որի հիմնադիրը Պարացելսն էր, կտրականապես անընդունելի է ժամանակակից բժշկագիտության համար, ապա դեղաբույսերի գերակշռող որակների քննությունը, դրանց համադրումների որոշակի կանոնները, սննդակարգի տրամաբանված ընտրությունը, տարբեր հիվանդությունների ժամանակ այս կամ այն ֆիզիոթերապևտիկ միջոցառման, բույրաբուժության, գունաբուժության և այլ մեթոդների խելամիտ օգտագործման հիմնավորումները, գուցե որոշ դեպքերում նաև բուժման փուլերի հաջորդականության ողջամիտ կիրառումը, կարող են այժմ էլ դրական արդյունք տալ, հատկապես այն հիվանդությունների բուժման գործում, որոնց անմիջական պատճառները մինչև հիմա էլ լիովին բացահայտված չեն, իսկ ընդունված բուժումն էլ միշտ չէ, որ պսակվում է հաջողությամբ:

⁵⁹ Քանի որ հռոմեական Վենեթան հունական Ափրոդիտեի համարժեքն էր, իսկ վերջինիս անունը հին քարգամուրջումնեում հաճախ փոխարինել են Աստղիկով: Տե՛ս Գ. Մուրադյան, *Հին հունական առասպելների արձագանքները հայ միջնադարյան մատենագրության մեջ*, Երևան, 2014, էջ 23:

KARINE MOSIKYAN

MEDIEVAL CONCEPTIONS OF TEMPERAMENT

Keywords: Temperament, Middle Ages, Four Elements, Fluids, qualities, Hippocrates, Galen.

In antiquity and the Middle Ages, conceptions of temperament, and their use in theoretical and practical science, differed radically from modern approaches. Changes in the humors (one's various bodily fluids), were thought to cause changes in the whole body. Thus, their study was deemed important in terms of diagnosis, treatment, prediction of outcome, and prevention of diseases arising from their imbalance. In the Middle Ages, general approaches to the treatment and care of illness were used as correctives for temperamental disorders. This approach was shared by medieval Armenian doctors. The teaching of Hippocrates and Galen concerning the humors was the basis for the medical ideas of Mkhit'ar Herats'i, Amirdovlat' Amasiats'i, Grigoris, Abusayid and others. Following after their Hellenic forebears Armenian doctors developed a complex system of disease diagnosis, etiology, pathogenesis, description of clinical symptoms, treatment and care.

To understand the peculiarities of the activities of ancient and medieval doctors, it is necessary to have a comprehensive understanding of how they perceived the phenomenon of temperament. This article is an attempt at providing such an overview.

КАРИНЕ МОСИКЯН

СРЕДНЕВЕКОВЫЕ ПРЕДСТАВЛЕНИЯ О ТЕМПЕРАМЕНТЕ

Ключевые слова: Темперамент, средневековье, четыре стихии, жидкости, качество, Гиппократ, Гален, Авиценна, Амирдовлат Амасиаци.

В античности и средневековье концепции темперамента и их применение в теоретической и практической науке радикально отличались от современных понятий. Количественные и качественные сдвиги органических жидкостей, вызывающие изменения во всем организме, имели важное значение как с точки зрения диагностики, лечения, прогнозирования исхода, так и профилактики возникающих в нем заболеваний. В средние века для уравнивания откло-

нений темперамента использовались общие подходы лечения и ухода. Этот подход разделяли и средневековые армянские врачи. Медицинские идеи Мхитара Гераци, Амирдовлата Амасиаци, Григориса, Абусаида и других основывались на учении Гиппократ и Галена о темпераменте, руководствуясь которым, армянские врачи организовали весь комплекс диагностики заболеваний, этиологии, патогенеза, описания клинических симптомов, лечения и ухода.

Чтобы понять античных, средневековых и даже более поздних врачей, необходимо иметь как можно более полное и всестороннее представление о том, как они трактовали феномен темперамента. Данная статья представляет собой попытку проанализировать эту тему в нескольких ее аспектах.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլաձորի համալսարանի ուսուցիչները և սաները..... 5

ՀՐԱՆՏ ՕՀԱՆՅԱՆ

Դավիթ-Դանիելյան պալաթարը և Լազարյանները..... 34

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ ԹԵՐԶՅԱՆ

Գևորգ Կաղի ժամանակաշրջանի ճշգրտման փորձ..... 54

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԻՆԵ ՄՈՍԻԿՅԱՆ

«Խառնվածք» հասկացությունների ճշգրտման ընկալումները..... 61

«ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ՝ ԲԱԶՄԱՇՆՈՐՀ ՀԱՅՐԱՊԵՏԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ (2023 թ. հունիսի 21-23)

ԶԱՔԱՐԻԱ Ծ. ՎՐԴ. ԲԱՂՈՒՄՅԱՆ

Հայոց եկեղեցու անդամագրությունն ըստ
«Արևորդիների դարձի մասին» Ս. Ներսես Շնորհալու թղթի..... 83

ԷՌԵԱ ՄԱՆԵԱ ՇԻՐԻՆՅԱՆ

Ներսես Դ Կլայեցի կաթողիկոսի «Շնորհալի»
պատվանվան մասին..... 97

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Ներսես Շնորհալին խրատական բանաստեղծության հիմնադիրը..... 116

ԼԱԼԻԿ ԽԱԶՍՏՐՅԱՆ

Պատկերավոր համեմատությունների ձևակազմական
կաղապարները Ներսես Շնորհալու «Ողբ եղեսիոյ» պոեմում..... 127

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

Ներսես Շնորհալի և Կոմիտաս վարդապետ..... 139

ՄՀԵՐ ՆԱՎՈՅԱՆ

Հայկական վերածննդի երաժշտաբանաստեղծական արվեստի որոշ
բնութագրիչներ՝ Ս. Ներսես Շնորհալու ժառանգության մեջ..... 156

ՀԱՍՄԻԿ ԻՐԻՑՅԱՆ

Ներսես Շնորհալու նորահայտ բնագիրը ՄՄ 3839 ձեռագրում (անգլ.)..... 166

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍԵՅՆԳԵՀՆԱՍԻՄ ՖԱԹԵՄԻ, ՀԱՅԿԱԶ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Մատենադարանի այլալեզու ֆոնդի շորս միավորի նկարագրություն (անգլ.)..... 179

ՍԱԹԵՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երկու հնատիպ հմայիլների ուսումնասիրության հետքերով..... 195

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԷՍԹԵՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գրիգոր Լուսավորչին վերագրվող տեսիլ-հարցումը (համեմատական բնագիր)..... 212

ԱՐԵՎԻԿ ԱՐԱԲՅԱՆ

Առաքել Սյունեցու «Ղազարու յարութեան» և «Մեծատան եւ Ղազարու» անտիպ տաղերը..... 251

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ

Զափաթիա Ծայրագոյն վարդապետ Բաղումեան, Կիրակոս Երզնկացու՝ Սուրբ Եւագր Պոնտացու երկերի լուծմունքները, խմբագիր՝ Գ. Տէր-Վարդանեան, Երևան, Մատենադարան, 2022..... 260

ԱՐՄԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Les Arts Libéraux et les Sciences dans l' Arménie Ancienne et Médiévale («Ազատ արվեստները և գիտությունները հին և միջնադարյան Հայաստանում»), sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022..... 270

ԲԱՆԱՎԵՃ

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դարձյալ հին Երևանի աշտարակի և երկուերեսնի եկեղեցու պարզաբանման շուրջ..... 280

Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների ձևավորմանը վերաբերող պահանջներ..... 296

CONTENTS

HISTORY

KAREN MATEVOSIAN

The Teachers and Students of Gladzor University.....5

HRANT OHANYAN

The Role of the Lazaryans in the Davit-Daniel Conflict.....34

PHILOLOGY

GAYANE TERZIAN

An Attempt at Dating the Life of Gevorg Kagh.....54

NATURAL SCIENCES

KARINE MOSIKYAN

Medieval Conceptions of Temperament.....61

PROCEEDINGS OF THE 6TH INTERNATIONAL CONFERENCE “NERSĒS SHNORHALI THE GRACIOUS PATRIARCH” (June 21-23, 2023)

PROTO-ARCHIMANDRITE ZACHARIA BAGHUMYAN

Membership in the Armenian Church According to St. Nersēs
Gracious' Letter “On The Conversion of the Sons of the Sun”.....83

ERNA MANEA SHIRINIAN

About the Title “Graceful” of Catholicos
Nersēs IV Klayets‘i.....97

VANO EGHIAZARYAN

Nersēs Shnorhali as the Founder of the Genre
of Didactic Poetry.....116

LALIK KHACHATRYAN

Formal Models of Figurative Comparisons
in the Poem “Elegy on the Capture of Edessa”
by Nersēs Shnorhali.....127

LUSINE SAHAKYAN

Nerses Shnorhali And Komitas Vardapet.....139

MHER NAVOYAN

Some Characteristics of the Musical and Poetic Art
of the Armenian Renaissance in the Heritage
of St. Nerses Shnorhali156

HASMIK IRITSYAN

A Newly Discovered Work of Nersēs Shnorhali
in Ms M3839166

BIBLIOGRAPHY**SAYEDEHNASIM FATEMI, HAYKAZ GEVORGYAN**

Description of Four Units of Matenadaran's Foreign Language Fund179

SATENIK GRIGORYAN

On Two 18th C. Scroll Amulets195

PUBLICATIONS**ESTER PETROSYAN**

The Revelation Attributed to Gregory the Illuminator212

AREVIK ARABYAN

Arak‘el Siwnets‘i and his Unpublished Verses
“The Resurrection of Lazarus” and “The Rich Man and Lazarus”251

BOOK REVIEWS**ARUSYAK TAMRAZYAN**

Proto-Archimandrite Zacharia Baghumyan, *Kirakos Erznkais‘i’s
Commentaries on Saint Evagrius Ponticus’ Works*, Yerevan, 2022260

ARMINE MELKONYAN

Les Arts Libéraux et les Sciences dans l’Arménie Ancienne et Médiévale,
Sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022270

DISCUSSION**ARSEN HARUTYUNYAN**

Once More on the Interpretation of Old Yerevan’s Tower
and Church Yerkueresni (St. Paul and Peter)280

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

КАРЕН МАТЕВОСЯН

Преподаватели и учащиеся Гладзорского университета 5

ГРАНТ ОГАНЯН

Противостояние Давид-Даниэл и Лазаревы 34

ФИЛОЛОГИЯ

ГАЯНЕ ТЕРЗЯН

Опыт уточнения времени жизни Геворга Кага 54

ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

КАРИНЕ МОСИКЯН

Средневековые представления о темпераменте 61

**ИЗ МАТЕРИАЛОВ 6-ОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ
“БЛАГОДАТНЫЙ ПАТРИАРХ НЕРСЕС ШНОРАЛИ”
(21-23 июня, 2023 г.)**

ПРОТОАРХИМАНДРИТ, ЗАХАРИЯ БАГУМЯН

Принятие в лоно армянской церкви согласно посланию Св. Нерсеса Благодатного «Об обращении Сынов Солнца» 83

ЭРНА МАНЕА ШИРИНЯН

О титуле «Шнорали» католикоса Нерсеса IV Клаеци 97

ВАНО ЕГИАЗАРЯН

Нерсес Благодатный – основоположник жанра поучительных стихотворений 116

ЛАЛИК ХАЧАТРЯН

Формальные модели образных сравнений в поэме «Элегия на взятие Эдессы» Нерсеса Шнорали 127

ЛУСИНЕ СААКЯН

Нерсес Шнорали и Комитас Архимандрит 139

МГЕР НАВОЯН

Некоторые характеристики музыкально-поэтического искусства армянского Возрождения в наследии Св. Нерсеса Шнорали.....156

АСМИК ИРИЦЯН

Новонайденный текст Нерсеса Шнорали в рукописи № 3839 из собрания Матенадарана.....166

БИБЛИОГРАФИЯ**ФАТЕМИ СЕЙЕДЕХНАСИМ, АЙКАЗ ГЕВОРГЯН**

Описание четырех единиц иноязычного фонда Матенадарана.....179

САТЕНИК ГРИГОРЯН

О двух старопечатных свитках-оберегах XVIII в.195

ПУБЛИКАЦИИ**ЭСТЕР ПЕТРОСЯН**

Откровение, приписываемое Григорию Просветителю.....212

АРЕВИК АРАБЯН

Неизданные стихи “О воскрешении Лазаря” и “О богаче и Лазаре” Аракела Сюнеци.....251

РЕЦЕНЗИИ**АРУСЯК ТАМРАЗЯН**

Протоархимандрит Захария Багумян, *Толкование Киракоса Ерзнкаци на сочинения Евагрия Понтийского*, Ереван, 2022.....260

АРМИНЕ МЕЛКОНЯН

Les Arts Libéraux et les Sciences dans l'Arménie Ancienne et Médiévale, Sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022.....270

ДИСКУССИЯ**АРСЕН АРУТЮНЯН**

Вновь об интерпретации башни и церкви Еркуересни (Св. Павла и Петра) старого Еревана.....280

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 36

BULLETIN OF MATENADARAN

Volume 36

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 36

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝ *Ձեռ. եղմ. 365՝ Եսայի Նչեցին Գլաձորի համալսարանի
ուսուցիչների և սաների հետ*

Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 19

տպամանակ՝ 150

Մատենադարան

Մետրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի
հրատարակչական բաժին, ք. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033
publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի թվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/